Հավելված N 1
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 28-ի N 265 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.14 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

| Չափորոշիչներ | | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | | | | ֆինանսական ցուցանիշներ | | | |
| | | առաջին եռամսյակ | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի | առաջին եռամսյակ | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի |
| **ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները**<br>**1. Քաղաքականության միջոցառումներ**<br>**1.2. Ծառայություններ** | | | | | | | | | |
| Ծրագրային դասիչը | | Անվանումը<br>Կարանտինի սահմանում և կարանտին միջոցառումների իրականացում<br><br>Նկարագրությունը<br>Արմավիրի մարզի Աղավնատան և Գայի համանքներում խաղողի ֆիլոքսերայով վարակված տարածքներում կարանտին միջոցառումների իրականացում | | | | | | | |
| 1029 | ԱԾ02 | | | | | | | | |
| Քանակական | Կարանտին սահմանվող տարածքներ (հա) | 8.91 | 8.91 | 8.91 | 8.91 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Որակական | Մշակված չէ | | | | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Ժամկետայնության | Մշակված չէ | | | | | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ) | | | | | x | 5134.8 | 5134.9 | 5134.10 | 5134.8 |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>1029 Հողերի բարելավման աշխատանքներ | | | | | | | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Հողօգտագործումից ստացվող արդյունքի բարելավում կամ այդ բնագավառում կորուստների նվազեցում | | | | | | | | | |
| Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը (անվանումները)<br>«Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ | | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 28-ի N 265 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.51 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

<table>
<tr><td colspan="3" rowspan="3">Չափորոշիչներ</td><td colspan="8">Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական նշանով)</td></tr>
<tr><td colspan="4">ոչ ֆինանսական ցուցանիշներ</td><td colspan="4">ֆինանսական ցուցանիշներ</td></tr>
<tr><td>առաջին եռամսյակ</td><td>առաջին կիսամյակ</td><td>ինն ամիս</td><td>տարի</td><td>առաջին եռամսյակ</td><td>առաջին կիսամյակ</td><td>ինն ամիս</td><td>տարի</td></tr>
<tr><td colspan="11">ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները<br><u>1. Քաղաքականության միջոցառումներ</u><br><u>1.2. Տրանսֆերտներ</u></td></tr>
<tr><td colspan="2">Ծրագրային դասիչը</td><td colspan="9" rowspan="2"><u>Անվանումը</u><br>Խաղողի ֆիլոքսերայով վարակված տարածքներում բերքի դիմաց փոխհատուցում<br><u>Նկարագրությունը</u><br>Արմավիրի մարզի Աղավնատան և Գայի համանքներում խաղողի ֆիլոքսերայով վարակված տարածքներում երեք տարվա բերքի դիմաց փոխհատուցում</td></tr>
<tr><td>1029</td><td>ԾՏ01</td></tr>
<tr><td colspan="2">Շահառուների քանակը</td><td>Փոխհատուցման ենթակա հողերի ընդհանուր տարածքը (հա)</td><td>8.91</td><td>8.91</td><td>8.91</td><td>8.91</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="2">Գումարը (հազ. դրամ)</td><td></td><td></td><td></td><td></td><td>x</td><td>27,933.5</td><td>27,933.5</td><td>27,933.5</td><td>27,933.5</td></tr>
<tr><td colspan="3">Տրանսֆերտի վճարման հաճախականությունը</td><td colspan="4">միանվագ</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="11">Շահառուների ընտրության չափանիշները Արմավիրի մարզի<br>Աղավնատան և Գայի համանքներում խաղողի ֆիլոքսերայով վարակված տարածքների հողատերեր</td></tr>
<tr><td colspan="11"><u>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</u><br>1029 Հողերի բարելավման աշխատանքներ</td></tr>
<tr><td colspan="11"><u>Վերջնական արդյունքի նկարագիրը</u><br>Հողօգտագործումից ստացվող արդյունքի բարելավում և (կամ) այդ բնագավառում կորուստների նվազեցում</td></tr>
</table>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 28-ի N 265 - Ն որոշման

Ձև

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

## ԱՅԳՈՒ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզ, գ. _________ ___ __________ 2013 թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ ի դեմս տնօրեն __________________-ի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի _____________ համայնքի բնակիչ _____________________________-ը (անձ._____________ տրված ________թ. ____ -ի կողմից), ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ _______________-ը և ՀՀ Արմավիրի մարզի _________ համայնքի ղեկավար ____________-ը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N 265-Ն որոշումը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կազմակերպությունը պարտավորվում է՝

1) ՀՀ Արմավիրի մարզի ____________համայնքում գտնվող, _______________-ին պատկանող խաղողի այգում (սեփականության վկայական N____________) բարեխղճորեն իրականացնել խաղողի վնասատուներով վարակված այգիների քանդման և վարակազերծման աշխատանքներ.

2) այգիների քանդման և վարակազերծման աշխատանքների ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում քանդման աշխատանքների ավարտը հավաստող արձանագրության պատճենը տրամադրել ՀՀ Արմավիրի մարզպետարանին:

2. Քաղաքացի _____________________-ը տալիս է իր համաձայնությունը՝ սույն համաձայնագրի 1-ին կետում նշված այգու քանդման և վարակազերծման աշխատանքների կատարման համար, պարտավորվում է չխոչընդոտել

կազմակերպությանն այդ աշխատանքները կազմակերպելու ընթացքում և ստորագրել քանդման աշխատանքների ավարտը հավաստող արձանագրությունը:

3. ՀՀ Արմավիրի մարզպետարանը պարտավորվում է քանդման աշխատանքների ավարտը հավաստող արձանագրության պատճենն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացի ________________-ին տրամադրել _________________ դրամ սոցիալական աջակցություն:

4. ՀՀ Արմավիրի մարզի ____________ համայնքի ղեկավարը պարտավորվում է աջակցել կազմակերպության կողմից այգու քանդման և վարակազերծման աշխատանքների իրականացմանը և ստորագրել քանդման աշխատանքների ավարտը հավաստող արձանագրությունը:

5. Սույն համաձայնագիրը կնքված է 4 (չորս) օրինակից՝ յուրաքանչյուր կողմի համար մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

| Կազմակերպություն | Բնակիչ |
| --- | --- |
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| **Մարզպետարան** | **Համայնքի ղեկավար** |
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |
| ________________________ | ________________________ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ